

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1898 թվականի
Պուլխարիոյ համար տարեկան 12 ֆրանկ
» » վեցամսեայ 6 »
Արտասահմանի » տարեկան 14 »
» » վեցամսեայ 7 »
ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Նամակ դրամ եռալըն դրկել հետեւեալ հասցեով
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԼՐԱԳՐՈՅ ՎԱՌՆԱ (ՊՈՒԼԿԱՐԻԱ)
Редакция на вѣстникъ
„Иравункъ“
ВАРНА (България).
Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւն/եք չեն դրկուիր եւ յարմար դատաւանները միայն կը հրատարակուին անբողջովին կամ մասամբ:
Երանուցման տոյր 20 սանթիմ. երեքին աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կը չինի:

ԹՐԲԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱԻՈՐՆԵՐԸ

Այն ձեռնարկները, զորս եւրոպայէ կընէ ստեպլ հաշտութիւն կամ համաձայնութիւն մը կայացնելու համար հայ յեղափոխականներու և թուրք կառավարութեան միջեւ, այն երեւոյթներէն են, որոնց վրայ կարծէ մէկէ աւելի անգամներ խօսիլ:

Տ. Լ. Ի տեսութենէն ետքը, զոր մեր նախորդ թիւին մէջ հրատարակեցինք, կուզենք խնդիրը թնեւ ուրիշ տեսակէտով մըն ալ և ջունալ պատասխան մը գտնել այն հարցումներուն որոնք ինքնին կը ծնին մեր մտքին մէջ, երբ կիսանաք թէ վստիքի ափսոսանքներէն պատգամաւոր մը մեկնած է, եւրոպայեան յեղափոխականներու հետ բանակցելու:

Եթէ ստոյգ են մեզի արուած տեղեկութիւնները, Տիրան Գէլէկեանէ զատ ուրիշ բանագնաց մըն ալ արդէն Եւրոպա հասեր է միեւնոյն պաշտօնով:

Առաջին բնական հարցումը զոր ստիպուած ենք ընել սա է թէ ինչ կրնայ ըլլալ բուն, ներքին շարժառիթը այն տեսակ մը փութկութեան զոր թուրքը ցոյց կուտայ համաձայնելու յեղափոխութեան ներկայացուցիչներուն հետ:

Եթէ Սուլթանը իրօք մտադիր է հայ ժողովուրդի պահանջներուն գոհացում տալ, պէտք չիկայ բռնաւ բանակցութիւններու: Իրեն համար շատ դիւրին է գրչի հարուածով մը ազատել բանտարկեալները, արտօնել գաղթականներու անարգել վերագարձը, ընդհանուր ներում տալ քաղաքական բոլոր ամբաստանեալներուն և կասկածելիներուն, հատուցանել գոնէ մասամբ մը, ժողովրդին վնասները, և լուրջ սկզբնաւորութիւն մը ընել այն բարենորոգումներուն, որոնց մով իրապէս և միանգամ ընդ միշտ կարենան ապահովուիլ հայուն անհատական և ազգային ամենէն տարրական իրաւունքները: Ինքնին պիտի դադրին այն ատեն խորարմատ զօգոհութիւնները, որոնք կը սընուցանեն յեղափոխութիւնը: Պատ-

ճառը վերնալով, ինքնին արդիւնքն ալ վերցուած կըլլայ:

Իսկ եթէ Եւրոպայէ կուզէ լոկ խարուսիկ խոստումներով համոզել յեղափոխականները, պէտք էր ցարդ համոզուած ըլլալ թէ ա'լ չէ մնացած աշխարհի վրայ հայ մը որ չի գիտնայ թրքական խոստումներու իսկական արժէքը: Ինչպէ՞ս կրնայ յուսալ որ Գէլէկեանի նման բարոյական սնանկներու խօսքերով, որքան ալ ոսկեղօծ ու հրապուրիչ ըլլան անոնք, յեղափոխականը մէկէն գրծէ այն գործին, զորս կեանքի նպատակ ընտրեր է իրեն, անոր զոհել յանձնառու ըլլալով ամեն բան, հանգիստ, ապրուստ և հոգի:

Քանաւոր չեն երեւիր այս երկնթաղութիւններն ալ:

Սակայն թուրքը ուրիշ միջոց մը ունի որուն զօրութեանը վրայ կատարեալ հաւատք ներշնչած են իրեն հաղարաւոր փորձեր: Դրամը:

Հաւանականաբար դրամով կուզէ անհետացնել յեղափոխութիւնը որուն ներկայացուցիչները իրեն կը թուին ոչ թէ ժողովրդի ցաւերուն դէմ բողոքի մարմնացումներ, այլ շահագէտ ստահակներ:

Քնական է այս: Թուրք ժողովուրդի անզգայ համակերպութիւնը ամէն բանի նկատմամբ որ վերէն կուգայ, իր բողոքելու անընդունակ անզգայութիւնը աչքի առջեւ ունենալով, շատ բնական է որ Եւրոպայէ պաշտօնէութիւնը, միեւնոյն ժողովուրդի գաւակ, մտածէ թէ հայ ժողովուրդի մէկ մասը չէ որ գլուխ կը վերցնէ, այլ սովորական ստահակներու խումբ մըն է, որ կը խլրտի և զոր պէտք է լուսնել կրծօնով:

Փորձը պիտի ցուցնէ, ատոր տարակոյս չիկայ, թէ որքան սխալ ըմբռնում մըն է այս՝ պատմական երեւոյթի մը, որուն պատճառները անհատներու կամքէն և միտումներէն անկախ են և զոր կաշառքով մէջտեղէ բառնալ կարելի չէ:

Թուրքին մտածած միջոցը պիտի վրիպի նպատակէն: Ինչ է սա-

կայն նպատակը, բուն շարժառիթը այս դիմումներուն: Մենք չենք կարծեր որ թուրքը զողայ պարզապէս հայ յեղափոխականներու ցոյցերէն, զորս գիտցաւ ցարդ հայ ժողովրդին արեան մէջ խեղդել, Եւրոպայի քստմնելի անտարբերութեան շնորհիւ: Սակայն միւս կողմէ ալ սխալ մը պիտի ըլլար կարծել որ Դրամը իր ուժին բացարձակ գերազանցութեան վրայ վստահ՝ անտարբերութեամբ դիմէ յեղափոխութեան գոյութիւնը, որ կրնայ ժամանակով աւելի լուրջ ձեւեր առնել և քաղաքական տարբեր, իրեն համար աւելի նպաստաւոր հանգամանքներէ օգտուելով, վտանգաւոր դառնալ թրքական արդի վարչութեան:

Այս հեռապատկերն է որ ամենէն աւելի կը խորհեցնէ Պօլսոյ պետական մարդիկը:

Վախը անհիմն չէ, սակայն վերանային առջեւ առնելու համար մտածուած միջոցը, Գէլէկեան և ընկերներու առաքումը, բոլորովին անտեղի և ապարդիւն է:

Թուրքիոյ մեծագոյն դժբաղդութիւնը եղած է արդէն իր վարչական ղեկին անանկ մարդոց ձեռքին մէջ ըլլալը որոնք ամենէն էական խնդիրներու մէջ չեղ կը տեսնեն ու ծուռ կը դատեն իրենց՝ նախապաշարունակներով կաշկանդուած մտքով:

Եւ ցորչափ Սուլթան Համիտ շարունակէ խորհրդակից ունենալ մարդիկ որոնք բաւական լայն միտք մը չունին հեռատեսելու համար թէ հայկական շարժերը երկսայրի սուր մըն էին՝ ուշ կամ կանուխ՝ զայն գործածողին ալ սպառնացող, և թէ Թուրքիոյ փրկութիւնը միմիայն հիմնական բարենորոգումներով կրնայ ապահովուիլ, դեռ շատ Գէլէկեաններ պիտի երթան ու գան առանց երկվայրկեան մը անգամ կասեցնելու իրերու ներկայ ընթացքը, որ երկիր ճակատագրական անողորմութեամբ մը անվրէպ կը տանի դէպ ի կորուստ:

ՀԱՅԵՐՈՒՆ ՃԵՅՈՒՆԸ

Անոնցմէն էր ձէյկուլտ, որոնց վատագորի կուրծքին տակ մարդկային խղճի ազգու ձայնը լսած է բոլորովին եւ որոնք իրենց ոսկիին դէզը խոշորցնելու համար, ամենէն անարտ կեղեքումը, ամենէն անգութ հարստանարութիւնը անգամ օրինաւոր ու մաքուր միջոց մը կը նկատեն իրենց գործերուն մէջ: Ուղղամտութիւնը ծիծաղալարժ բառ մըն է անոնց համար, ապուշ զգացում մը, որ մարդը կը կաշկանդէ իր հարստանալու անսահմ քայլերուն մէջ:

Ձէյկուլտ՝ ամենէն ջերմեանդ երկրպագուներէն էր դրամին, որուն Բաաղի ախրապետութեանը առջեւ, այսօր, թագերն ու ծիրանի պատմութեաններն անգամ կը խոնարհին:

Իրեն համար միակ ճարպիկութիւնը, միակ խելացութիւնն էր շահու ագրիւնները հետզհետէ քաղաքականիլ ինչքան անազնիւ, ինչքան անարգ միջոցով կըլլայ թող ըլլայ:

Իր անարգարութեամբ, իր ծայրայեղ անիրաւութեամբ զգուհաք ազդած էր ամենուն:

Ամերիկայի ժողովուրդը անոր շողջողուն գոհարեղէններուն մէջ հազարաւոր կողոպտուած թշուառներու արիւն արցունքը կը տեսնէր բիրեղեցած: Ուստի ընդհանուր պօղանքով մը մտածեց մերժել, եթէ նոյն իսկ խաշորկէկ գումար մը կտակէր բարեկամական հաստատութեանց համար: Ամերիկացիին մտածումը որքան ալ միամիտ թուի շատերու աչքին, ժողովրդային այդ արդար արհամարհանքը, հանրային այդ նախատինքը իր ամենամեծ նշանակութիւնը ունի:

Ձէյկուլտները պէտք չէ որ ազգի մը յաւիտեական երախտապարտութիւնը կարենան ծախել առնել իրենց ոսկիով որը ա'յնքան ազոտոտ, այնքան գաբիլի միջոցներով ձեռք են ձգած: Պէտք չէ որ փոքրիկ կամ մեծ գումարի մը փոխարէն, իրենց անունին առջեւ Բաաղի յաւերժական յիշատակը արձանագրուած ունենան անոնք՝ որոնք իրենց անպիտան կեանքի զառանցող օրերուն մէջ վեհանձնութեան ու բարութեան ստուերն անգամ ունեցած չեն եւ ընդհակառակը, մէկ մէկ կենդանի տիպարներ եղած են անզգամութեան եւ ստոր գձձութեան:

Տիրքի, Հոֆմանի եւ ուրիշ քաղաքական, անկեղծ մարդասէրներու յիշատակը չարաչար նախատուած կըլլայ, երբ իրենց համակրելի անունները շարքին մէջ, հաւասար ընդունելու ջիւնով, կը նշանակուի նաեւ անկարելի հարստանալի մը որուն խոժոռ աչքը՝ իրենց դաժան յօնքերուն

տակ, մինչև գերեզման կոյր մնացած են ամեն տառապանքի, ամեն արցունքի առջև։

Շատ թանկագին է հասարակութեան մը արժանապատուութիւնը, ընդհանուրին երախտագիտական զգացմունքը որ պէտք է ցածնայ պորտաբոյծ ունեւորի մը մէկ քանի ոսկիներուն առջև։ Ամերիկացիներու ընդհանուր արհամարհանքի այն ողջամիտ արտայայտութիւնը վերին աստիճանի համակրելի է մանաւանդ երբ խորհինք որ անյանկ ժամանակի մը մէջ կ'ապրինք, ուր չառ տեղեր, ժողովուրդը տակաւին ամեն արժանիք, ամեն մեծութիւն ու ազնիւ յատկութիւն ամեն աժան կը վերադէ միմիայն այն անձներուն որոնք կա՛մ անխոստովանելի միջոցներով յաջողած են մեծակ հարստութիւն մը կուտակել եւ կա՛մ զրկուածով բազմ սենցած են իրենց հորմէն կըրելի գումար մը ժառանգել։

Ասոր համար է որ մեծ մեծ բարերարի, մարդասէրի համբաւը կը վայելեն շատ անգամ այնպիսի մարդիկ, որ իսկապէս ոչ այլ ինչ են բայց եթէ ամեն լաւ զգացումէ զուրկ, ստակի ազատելի կիրքով դիակնացած ցած հողի արարածներ։

Ամերիկացիին իր այդ արհամարհանքով ցոյց տուաւ թէ կարող է ստորին շրջաններով առ յաւէտ փոխադրել անարդ յիշատակ մը որ քանի՜ հիննայ այնքան աւելի նողկալի պիտի դառնայ սերունդներու առջև։

Ժողովուրդ մը բարոյական սարսափելի ստրկութեամբ պէտք է վարակուած ըլլայ խոնարհելու համար անունի մը առջև որ մարդուն կը յիշեցնէ անյայտ ընկալաբարութիւն մը եւ անամօթ յափառակիչ մը։

Դրամին առջև հասարակութեան ամենաշուկ հպատակութիւնն է պառճառը որ չառ անգամ ձէյկուլտները՝ ըստորաբար ետամուլութեամբ, անխայթ խղճմանքով ժողովուրդին պատուին հետ խաղալէ, անոր արեւը չարաչար ծծելէ յետոյ հոտած, փոտած կտակով մը, մշտնջենապէս, անզուգական բարեբաղի անդուստի միջոցակը կը յաջողին թրջուր։

Ապաքն ձէյկուլտ մըն ալ մենք ունինք։ Բերքոր Գարակէօգեանը, թեւեւ քաղաքէն հարուստը Պօլսոյ Հայերու համագործակցութիւն կապուի մը անդամ փոխադր։

Գաղափէօգեանները հին եւ բազմանդամ ընտանիք մը կը ներկայացնեն որմէն Կարապետի եւ Տիգրանի պէս մարդեր։ Մեր կրթական գործին զարկ մը տալու փափագով, լաւ մտածութիւններ սենցած են, իրենց ստացուածքէն քաճին մը հանելու Ազգին։

Կապիտալներու մասէն յետոյ, միշտ մէջ-առք տնկուած է Գրիգորը, որ ամեն մեծ քաղաքներէն իր զօրք գրած է, եւ դեռ չը գնէ, իր բարեմիտ եղբայրներէն ազգին ինկած գումարը իւրացնելու նենգամտութեամբ։

Ազգային Պատրիարքարանը, ինչպէս նաեւ Պօլսոյ հայ լրագրութիւնը նորէն մեծ իրաւանցումով կը զբաղին այս շաւիտենապէս անգործադրելի կտակներու խնդրով, որոնց պատմութիւնը ալ եւս 70 տարեկանէն մինչև 7 տարեկան հայ անհատը գոց գրեալ։ Բնաւ միտք չունիմ այստեղ այդ տաղտկալի պատմութիւնը ընկելու։

Սկզբունքի մը շուրջն է որ կուզեմ պատնալ քիչ մը։

Անհատական է թէ ինչ ըսել կուզէ մեծատուն Գարակէօգեաններու ներկայացուցիչը, վատութեան, ազատութեան այդ գերազանց տիպարը, որ տարիներէ ի վեր խնդ ու

խելառ առարկութիւններով ազգը խաղցնելէն յետոյ, հիմակ ալ կուզէ խորել պատկանելի գումար մը որ ազգին անկապտելի իրաւունքն է այսօր իր եղբայրներէն կտակուած։ Կըսուի, թէ այս նոյն Գրիգորը նպատակ ունի ընտիր կտակ մը ընել ազգին, սակայն կը վախճամ որ կտակ ըլլայ այդ, անհամ, անամօթ կտակ մը ազգին գլխին։

Չէ՛, մեր մէջ այնչափ մեծած չէ արժանապատուութեան զգացումը։

Այդ ձէյկուլտը թող իր տեղը մընայ, հերիք է, եթէ արդէն եղածնեւրուն գէ՛մ այսպէս զոռելի արդիւնքներ չի յարուցանէ։

Եթէ Կարապետի կտակը մինչև հիմա գործադրուած ըլլար, ապահովաբար գոնէ սերունդ մը օգտուած պիտի ըլլար անկէ։ Կարապետի ժառանգորդներուն ներկայացուցիչը ոչ միայն անհերքելի գողութիւն մըն է որ ընել կը փորձէ, այլ եւ իր ձեռքով անգին պատասխանատուութեան տակ կը մնայ, բարոյական տեսակէտով, ուրիշ սերունդի մըն ալ առջև, որուն անժխտելի իրաւունքն է կարեւոր կրթութիւն մը ստանալ։

Գարակէօգեանները՝ իրենց ներկայացուցիչով, պարզապէս կը խաղան հիմա հայ ազգին հետ, որուն բարեբարը հոգակուելու տենչով կ'երին, կը մրկին միւս կողմէն։ Հայ ժողովուրդը պէտք է որ զիջողութիւն մը ընէ այս պարագային։ Կա՛մ կտակը ձեռքով արձագանք տալու է եւ կա՛մ արհամարհանքով մերժելու է, ինչ զիջող ալ վճարել ուզին իրեն։

Հայը ցոյց տալու է, թէ ողորմութիւն մը չէ որ կը պահանջէ Գարակէօգեաններէն, այլ՝ իրաւունք մը զոր պաշտպանել իրանալու է վիհանձնութեամբ եւ առանց ստորնախառն։

Ոչ ոք իրաւունք ունի Ազգին կըտակուած գումարէն փուլ մը զիջելու։

Անոնք որ գրպանի կ'աշխատին այդ գումարէն որ եւ է մաս մը, չըտկէ չիտակ գողեր են, ձէյկուլտնեւրուն անիւններու առջև անողոր արհամարհանք մը, անվերջ պզգանք մը միայն ունենալ կ'արժէ։ Ուրիշ ոչինչ։

Լ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բաւիդ 8 յունիս *

Արքիար—Հրանդ խնդրոյն մէջ ձեր ցոյց տուած անկողմնակալ ուղղութեան վրայ վստահելով, կը յուսամ որ պիտի հաճիք ամբողջութեամբ հրատարակել սա մէկ քանի փող բացատրութիւնը Շարժումի 28րդ, թիւին մէջ ինծի գէ՛մ երեւցած յափուտանքներուն նըկատմամբ։

Շարժում թիւթին հիմնուելէն շաբաթ մը յետոյ, գլխաւոր խմբագիրներէն մին, Պ. Ն. Ս., Կեղորոտական վարժարանի նախկին աշակերտ, բարեկամական նամակով մը աշխատակցութիւնս խնդրած էր Շարժումին համար։ Զբաղումներս ինծի անխաբիւր կը դարձնէին այդ առաջարկը ընդունիլ, եւ ցառով ստիպուեցայ մերժել հին դպրոցակցի մը խնդրանքը, բայց քաջալիքական քանի մը խօսք ուղղեցի

* Այս նամակը անկողմնակալ կը հրատարակենք իր Յարգոյ հեղինակի խնդրանքով։

եւ քննադատեցի մանաւանդ կուտակցական ոգիէ զերծ, զուտ ազգային ուղղութիւնը զոր կարծած էի տեսնել թերթին առաջին թիւերուն մէջ։ Այդ տողերս, զորոնք հրատարակութեան համար չէի գրած՝ Շարժումին մէջ յիշատակուեցան իրր թանկագին գնահատում մը։

Բայց երբ Հրանդի տոպիկն յօդուածը երեւցաւ Շարժումին մէջ, չկրցայ հանդուրժել որ քննադատում մնայ թերթի մը վրայ, որ իմ երեւակայածէս շատ հեռու՝ անձնական կրքերու գործիք կը դառնար, եւ իսկոյն Պ. Ն. Ս. ինչ զրկեցի սա երկտողը, որուն պատճէնը պահած եմ բարեբաղքաբար։

«Արքիար Պարոն,

«Ամենամեծ ցառով տեսայ ձեր Շարժումին մէջ Հրանդ ստորագրութեամբ յօդուած մը, որ վերջնականապէս կ'ազարտէ, կ'անուանարկէ ձեր թիւթը։ Չեմ ուզեր եւ ոչ իսկ փորձ մը ընել պաշտպանելու Բաշալիանի եւ Արքիարեանի պէս գրագէտներ որոնք պէտք չունին պաշտպանուելու եւ որոնց անունին առջև կը կարծէի որ դուք, գրագէտ, յարգանք պիտի գրայիք։ Եւ շնորհաւորած էի ձեր թիւթը, որովհետեւ կուտակցական ոգիէ զերծ կը գտնէի զայն, հիմա, կուտակցականութենէ աւելի զէջ լսան մը կ'ընէք, ձեր թիւթը գործիք կ'ընէք ողորմելի մը անձնական կրքեր, եւ կը զիջանիք հրատարակել յօդուած մը որ ոչ մէկ գաղափար, ոչ մէկ փաստ կը պարունակէ, բայց միայն ապուշ չախտալիք եւ ցած մատնութիւն։ Բարոյական պարտականութիւնս կը զգամ ինծի՝ շնորհաւորութիւններս կտ աւանդ, եւ կը խնդրեմ որ այս երկտողս հրատարակէք։»

Աններելի անբարոյութեամբ, Շարժումը հրատարակած է երկտողս մէկ փոքր միայն (հակառակ պահանջին) որ ամբողջութիւնը հրատարակին, եւ այդ փոքրն ալ մեկնած է արամբանութեամբ մը զոր շիկամորթ մարդակեր վայրենիներուն քով անգամ զըմուտը է գտնել։

Իմ գրածս՝ ո եւ է խղճամիտ, ողջամիտ անձի համար՝ արեւու չափ պայծառ էր։ Ես այդ նամակ ուղղած էի Շարժումին, որովհետեւ չէի ուզեր որ կարծուի թէ համակրող կը մնամ թերթի մը որ շնականորէն կը պղծէր ճիշդ այն արժանիքը զոր անոր մէջ գտած եւ զոված էի։ Դժայտեղ անգիտակցութեան կամ ծայրագոյն լրբութեան երեւոյթ մըն է Շարժումին ընթացքը, որով անձի մը ապերաշտուն հայհոյանքներուն փողար դառնալէ յետոյ, կը համարձակի «անկողմնակալ» հոգակել զինքը եւ «հալածուած մը» պաշտպանելու ձեւը կ'առնէ։ Կատակը շատ անճոռնի է։ Ո՛վ է հալածուածը։ Արքիարը ի՞նք է որ հնարեց այս վէճը։ Ինչո՞ւ Շարժումը կը մոռնայ որ խնդրը ծնուցանողը նոյն ինքն էր, Հրանդն է, թէ Արքիարի այդ նախկին բարեկամն ու աշխատակիցը, քանի մը ուրիշ անձերու հետ, շատոնց արդէն՝ Պոլիս սկսած էր մտքի մէջ իր մտերմին չուրջը հիւսել այդ քառամեկ ամբաստանութիւնը, այնպիսի պարագաներու մէջ, ուր Արքիարին համար անհնարին էր ինքզինքը պաշտպանել, եւ այնպիսի կատակութեամբ մը որ Արքիարին գէ՛մ զաշույն հանելու չափ հեռուն գնաց։ Եւ երբ հիմա, Եւրոպայի մէջ, ազատ պայմաններէ օգտուելով, ամենէն արդար եւ բնական զրդումով, եւ ամենազովելի արիւթեամբ, Արքիար հաշիւ կը պահանջէ իրեն գէ՛մ նիւթ ուսած դաւին վրայ, ու դաւը նիւթողներուն սեւահոգի չարութիւնը երեւ

ւան կը հանէ, —ի՞նչպէս, ի՞նչպէս կարելի է ինքնապաշտպան Արքիարը անուանարկել համարել եւ ճշմարտութիւնը ճակատարաց պահանջողը՝ պառակտիչ հոգակել։

Այս պարզ ու յստակ հարցման պատասխանը թող տայ Շարժումը, փոխանակ մանկական ամբարտաւանութեան ծիծաղաշարժ ձեւեր առնելու։

Իսկ գրագէտներու համար յարգանք խնդրելով, անշուշտ ըսել չէի ուզեր թէ գրագէտ մը անսխալական պէտք է սեպել, բայց կը մտածէի— եւ այդ մըտածելու եղանակիս մէջ ինծի հետ ունիմ քաղաքակիրթ աշխարհին ամենէն ազնիւ մասը, — թէ ժողովուրդ մը մեծ խստութեամբ պարտաւոր է կշռել այն ամբաստանութիւնները որոնք կը նետուին իր գրագէտներուն, այսինքն իր միայն ու հոգին, իր էութեան ամենէն բարձր մասը ներկայացնող անձերուն ճակտին։ Ժողովուրդ մը, իր ամենէն արդիւնաւոր գրագէտներէն մէկուն անբարոյականացումը հաճախատար գիւրահաւանութեամբ մը ընդունելով, իր հոգեկան փոտութիւնը խոստովանած կ'ըլլայ ժողովուրդ մը իր հանրային մարդոց, իր գաղափարական պաշտօնեաններուն վրայ կարծիք փոխելու է ա՛յն ատեն միայն երբ փաստ, գրական ու անհրաքելի փաստ ցոյց տուի։ Իրեն գէ՛մ մասնաւորութեան ամբաստանութիւնը տարածուելէն ի վեր, Արքիար Հայրենիք լրագիրը հիմնեց, — հայ ցեղին մտաւորական կեանքին աւանդէն կարեւոր ու փառաւոր երեւոյթներէն մէկը, — եւ Պոլսէն հետանալէն ի վեր, իսրայէլայ յեղափոխականները զիմակալեմ ըրաւ. ասոնք մասնիչ եւ զած ըլլալու փաստեր չեն, այլ ապացոյցներ ամենէն ճշմարիտ հայրենասիրութեան։ Գառով Հրանդին յօդուածներուն, պառակտ բաժանանքներ են, եւ ո՛չ փաստ։

Ես այս խնդրոյն մէջ բացարձակապէս անկախ անձ մըն եմ, ոչ մէկ կերպով վերաբերութիւն չունի այդ գործը ինծի հետ։ Պոլիս երբեք ամանակցութիւն չեմ ունեցած յեղափոխական գործունէութեան, եւ համակարծիք ալ չեմ եղած այդ կանխաձեռն եւ հապճեպ շարժումին, բայց չեմ կրնար անտարբեր մնալ այսքան կարեւոր երեւոյթի մը առջև, եւ չեմ հասկնար որ ո եւ է Հայ անտարբեր մնայ, ազգին ամենէն նշանաւոր անձերէն մէկը կ'ամբաստանուի ամենէն աղտոտ ոճիւրով, ազգին պարտքն է պահանջել որ այս խնդիրը լուսաբանուի եւ վերջանայ։

Արքիար ինքն իսկ կ'առաջարկէ որ պատուոյ ատենն մը կազմուի. ամբողջ ազգը Արքիարի առաջարկը պէտք է ծափահարութեամբ ընդունի. պէտք է երեւան ելլեն եւ քննուին այն խորհրդաւոր sojournները որոնց վրայ հիմնուելով կարող մը մարդիկ Արքիարը մասնիչ կը համարին։ Ասկէց զատ ո եւ է ընթացք վերջնական դատաւարութիւնն է ամբաստանողներուն։ Եւ ասիկա պէտք է շուտով կատարուի։ Այս ճգնաժամային կացութեան մէջ, ազգը պէտք ունի, ոչ թէ թունաւոր վէճերով ինքզինքը փոստեցնելու, այլ իր բոլոր ճիգերն եւ ուժերը միացնելով լրջաբար իր փրկութեանը մտածելու։ Ալ հերիք է որչափ տեւեց այս անտանելի մղձաւանջը։

ԱՐՇԱԿ ԶՊԱՆԵԱՆ

Իրաւունքի 37. եւ 38. թիւոց մէջ պատու ունեցող ընթերցող «Երեկի Տարագրեալ»ի մէկ յօդուածն, որ պատասխան մը էր ինձ գէ՛մ իրաւունքի մէջ պոռնոտողին,

Որպէս քահանայ ուխտած եմ միայն դիտող մը ըլլալ այդ նպատակաւոր յարձակմանց որք կըստ պառնան պատիւս ազարտել, սակայն ամեն ողջամիտ ազգային կըրնայ գնահատել թէ իմ անձին եւ պաշտօնին դէմ յուզեալ խնդրոյն մէջ Պ. Լուսինի աւելի ձեռնարկ մըն է քան անկողմնակալ գրող մը եւ «Երեկի տարագրեալ»ի վկայութիւնն արժանաւոր պատասխան մը, նորա նախանձական յարձակմանց:

Այս առթիւ կը փութամ շնորհակալիքս յայտնել Պ. Տարագրեալի իր անաչառ ոգւոյն համար, որ փութաց իր բնածիր անկեղծութեամբ պաշտպան կանգնել մի հայ կղերի բարոյական պատուոյն դրական ասպարէզի մէջ, որ իր կարողութեան չափով ջանացած է եւ կը ջանայ օգտակար հանգիստնալ ընկերին եւ ազգին:

Խ. քննյ. Գ. Մուսկոփեան
1898 մայիս 28
Պուրքէշլի

ՊԱՏՐԻԱՐԿԸ ԲՈՂՈՔԱՐԿՈՒ

Կ. Պօլսէն եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Ս. Օրմանեան Դատական նախարարութեան բաղնիքէն Պատրիարքարանի իրաւասութեանց բանաբարման գէմ Սըսոյ կաթողիկոսական ընտրութեան խնդրին մէջ:

Դուռը հաճախատար Պատրիարքարանի ձեռքով Ս. Ալէքսանդրի օրինակով ընտրութիւնը իր ապօրէն բեկանիլ տալէ ետքը, ծանուցիր է Պատրիարքին թէ՛ որովհետեւ ընտրութիւնը Սոսոյ միաբանութեան գործն է, Պատրիարքարանի միջամտութեան պէտք չիկայ այս խնդրոյն մէջ:

Միշտ միեւնոյն յուսախաբողութիւնն է որ բաժին կիսնայ Ս. Օրմանեանի եւ իր խորհրդականներուն: Ամեն գործի մէջ տեղի կուտան կառավարութեան փափաքներուն առջեւ եւ կը կարծեն այս հաճախատար քաղաքականութեամբ Դուռը տրամադիր ընել ազգին իրաւունքները ու պէտքերը նկատողութեան առնելու: ու յետոյ, կը տեսնեն որ խաբուել են չարաչար: Այս նորագոյն դէպքը, ազգային իրաւասութեանց դէմ ուղղուած, բացորոշ, պաշտօնական հարուածը պիտի բանայ արգեօք վերջնականապէս Պատրիարքին աչքերը եւ պիտի ստիպէ՝ զինք ալ քիչ մը տարբեր կերպով պով խորհիլ եւ գործել: Յուսարի չէ:

ԼՐԱՔԱՂ

Օտեսքի Լեւոնի Կ. Պօլսոյ թղթակիցը կը գրէ.

«Այն լուրը թէ հայերը (գաղթականները) Թուրքիա կը վերա-

դառնան, յուսահատութիւն կը պատճառէ Անատոլիոյ ժողովուրդին: Այդ բաղմաթիւ հայերու վերադառնալուն պատճառաւ հացի գինը կը բարձրանայ: Բայց միւս կողմէն՝ այդ դժբաղդ մշակները, իրենց ջանասիրութեան շնորհիւ, մօտիկ ապագայի մը մէջ, նորէն հացի շոտմորոտի մը պիտի վերածեն հիւս սովի ենթարկուած Անատոլիոյ, եթէ կառավարութիւնը իրենց օգնէ եւ միջոցներ տալ կարգի գնելու իրենց գործերը: Թուրքիոյ հիւսայ միայն կը զգան թէ ինչ կորսնցուցած են յանձին մշակ հայերու: Դեռ քիչ ժամանակ առաջ Անատոլիոյ կը կերակրէր ամբողջ Թուրքիան: Բայց երբ աշխատողները հեռացան, սովը վրայ հասաւ իսկոյն»:

— Սովօքսովի մէջ բացուել է Յ. Ալիադուքի պատկերներու ցուցահանգէսը, որ մեծ ընդունելութիւն գտած է Սուլտանիներէն:

— Սուլտանին կը գրեն թէ կաթ. աղբիւր հովիւ Հայր Արսէն վեհաճի մայիս 31-ին հոն ժամանելու եւ սիրալիւ ընդունելութիւն մը դառնալ տեղին հայ ժողովուրդէն, բահաններէն եւ եկեղեցւոյ հոգաբարձութենէն:

— Արմենիա կը ծանուցանէ թէ Նիու-Եռքի պահակ զօրաւորին հայերէն ուսման, որոնց համար դրուած էր թէ պատերազմէ խոյս տուած են, վերադարձը են իրենց զինուորական ծառայութեան: Ճէրզիի պահակ զօրաւորին հայ անդամները գնացած են արդէն կըռուի դաշտը:

— Մէկ քանի ուսու լրագիրներ յայտնի դիտումներով ժամանակէ մը ի վեր ու եւ առիթ չեն փախցըներ հակառակութիւն սերմանելու կովկասի երկու զխաւոր տարբերուն, Հայերու եւ վրացիներուն միջեւ: Այս ջանքերը ապարդիւն չի մնացին եւ վրացի հրապարակագիրներ ալ սկսան յարձակիլ հայերուն վրայ: Այս կարգէն է վրացի բանաստեղծ Ակակի Թերեթիի որ իր Հաւաքածոյ անուն ամսութիւնին մէջ շարք մը ան տեղի զրպարտութիւններ ըրած է հայերուն դէմ, որպէս թէ պատմական հետազոտութիւններու վրայ հիմնելով իր տեսութիւնները:

Կովկասի հայ թերթերը պատասխանեցին վրացի բանաստեղծին զրպարտութիւններուն, ինչպէս որ արժան էր, հերքելով այն իրողութիւնները, որոնք իբր փաստ առաջ բերուած էին: Բարեբաղդաբար, հեղինակաւոր, օտար ձայն մըն ալ բարձրացաւ Հաւաքածոյին դէմ: Ռուս բրոֆեսոր Նիկողոս Մար, նշանաւոր պատմաբան եւ հայագէտ, իր «Վրացի բանաստեղծ Ակակի Հայերու մասին» վերնագրով յօդուածով, որ հրատարակուեցաւ Նովոյ Օբլոկիէի ուսու լրագրին մէջ, անհերքելի փաստերով ցոյց տուաւ թէ որքան ան-

հիմն են Ակակիի աննպաստ հրատարակութիւնները հայերու մասին: Այս յօդուածին հայերէն թարգմանութիւնը պոռչիւրի ձեւով հրատարակուեցաւ Թիֆլիսի մէջ:

Մեր սրտագին ցաւակցութիւնը կը յայտնենք Տիար եւ Տիկին Մ. Փօրթուգալեանի՝ իրենց սիրասուն դուստր Օր. Արմէնուհիի մահուան առիթով, որ իր հոգին աւանդեց մայիս 27-ին, 17ամեայ ծաղիկ հասակի մէջ:

ՉԻ ՎՃԱՐՈՂ ԲԱԺԱՆՈՐԴԱՆԵՐՈՒՆ

Մեր այն բաժանորդներուն ուրոնք ցարգ չեն զրկած մեզի իրենց բաժնեգիրը, կը ստիպուինք յիշեցնել թէ այս տարեշրջանի առաջին վեցամսեայ լրանալու մօտ ըլլալով, ալ ներքի անհոգութիւն մը չը պիտի ըլլար իրենց կողմէ՝ չփութալ վճարելու իրենց պարտքը:

Կը խնդրենք իրենցմէ որ հաճին խորհիլ թէ նկատողութեան առնելով որ լրագրական ամէն տեսակ ծախքերը կանխիկ են, վճարելու այս չափազանց անփութութեամբ խմբագրութիւնը դժբախտաբար մեծ անհկութեան մը կը դատապարտեն, որմէ իրենց համար ու եւ օգուտ մը չիկայ: Ինչո՞ւ ուրիշն այսպէս վարուի:

Մեր խօսքը, ի հարկէ, վճարելու տրամադիր եղող բաժանորդներու համար է:

Կան բաժանորդներ ալ որոնք թերթ կը ստանան երեք ամիս, վեց ամիս, տարի մը, եւ երբ բաժնեգիրն կը պահանջուի իրենցմէ, թերթը հա կը զրկեն ու պարզապէս կը միտին վճարել: Ասոնց եւ նմաններուն հետ յառաջիկային մտադիր ենք տեսնուիլ հրապարակաւ:

Դրամ եւ ապահովագրեալ նամակներ հարկ է առայժմ զրկել Տ. Միհրան ԶԳՈՆԵԱՆԻ հասցէին, կամ այն հասցէին, զոր մասնաւոր նամակներով ցոյց տուած ենք մեր բաժանորդներուն մէկ մասին:

Ի դիտութիւն ժողովրդեան կը ծանուցանեմ թէ Շարժումի հետ ունեցած դատիս առթիւ՝ ընդհ. դատախազին կողմէն նոյն լրագրին պատասխանատուին յղուած է հարկ եղած ազգագիրը եւ թէ հետեւաբար դատաւարութեան օրը մօտեցած է, զոր նոյնպէս պիտի ծանուցանեմ իր ժամանակին հանրութեան:

Տ. ԶԳՆԱՆՈՐԵԱՆ

«ԻՐԱՆԻՆԻՔ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Ս. Սիլիւստի. Պատասխանը զոր 40րդ. թիւին մէջ տուած էինք Ա. Ի. ձեզի չի վերաբերիր բռնաւ:

ԵՒՄԷՆԻ ՍՈՎԸ

Գոռնիկ տէ Պալգասի մէջ կը կարգանք:

«Սախաւի պաշտօնական լրագիրը կըսէ թէ Եւմէնի վիլայէթին ամէն մասերուն բնակիչներուն ծանուցուած է կայսերական դիւանի այն հեռագիրը որ կիմացնէ թէ Ն. Կ. վեհափառութեան, Սուլթանի հրամանով ազգու միջոցներ ձեռք առնուած են սովատանջ բռնակիչներուն օգնութիւն հասցընելու համար:

Այս լրագիրը մուծ գոյներով կը նկարագրէ այս նահանգին արդի դրութիւնը եւ Աստուծային Գործքեան կողմէ կրնէ՛ ժողովուրդը սովէ փրկելու համար, որ հաւոր կերպով մը զգալի կըլլայ ամէնուն: Ժողովուրդը կը շարունակէ գաղթել արեւելքէն արեւմուտք, ապրելու միջոցներ գտնելու համար. կենդանիներուն մէջ մահ շատ կայ, հօտէտա քաղաքին մէջ 600 մարդ կայ, որոնք զուրկ են ապրուստի միջոցներէ: Տեղական իշխանութիւնները յանձնաժողով մը կազմեցին օգնելու համար այս թշուառներուն եւ շրջակայ տեղերու ժողովուրդին: Սախաւի մէջ արմատներուն մաքսատուրքը շնչուեցաւ իշխանութիւնները Կ. Պօլսի դիմում ըրին խնդրելու համար որ միեւնոյն միջոցը ձեռք առնուի հօտէտաի մէջ ալ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բէքինի մէջ, կայսերական հրամանի մը համաձայն՝ համալսարան մը պիտի բացուի եւրոպական բարձրագոյն վարժարաններու կազմակերպութեան հետեւողութեամբ:

— Սըմաբանտ—Սիտման ուսական երկաթուղին շինութիւնը աւարտել է:

— Անգլիա վարձակալեց Քօլունկը, Հօնկ—Քօնկի դիմաց: Վարձու պայմանագիրը ստորագրեց Յունկ—Լի—Եամէն Ի Բէքին:

— Պարոն Ալֆոնս Ռոչիտ ուրուն ձին արշաւի մէջ շահեցաւ Բարիզի մեծ մրցանակը, 250 հազար ֆր., նուիրել է այս գումարը Բարիզի ազգայիններուն:

— Տ. Քաղիմֆ, թղթակից ուսութիւնը, Բ. Դոնէն արտօնութիւն խնդրել է ուսնեղէն թերթ մը հրատարակելու Կ. Պօլսոյ մէջ:

ՊՈՒՔՐԷՇ

Իրաւունքն սօն նօմէրօսնտա թէաճուպէն օգուտում Պուրքէշ հոգաբարձուլարնտան եաղըլմըջ օլան պիր մէքթուպէ տայիր տէրծ իթմիշ օլտըլմըջ պիր գաչ սաթըրը:

Մ. Սաքիա—Մուսինին գուլաղը չընլասըն. Միսաֆիր իմգասի իլէ եաղըլմըջ օլան մէքթուպէ Պուրքէշ հոգաբարձուլարը իլին «Երեքսէք շարգալը էֆէնտիլը» տէնմիշ

օլմասընտան տօլայը միասփիրի թէքտիր իթմէք իսթէյօր տը :

Մէքըրը հոգաբարձուարըն էվ-
րորա գըթմասընտա պիր բաթմախտ-
տա եաշամըլ օլտըգլարը հալտէ ,
եիւքսէք շարգալարընտան մաստա
թիւրքտէն ֆարգ օլընաճագ պիր
եհըլէրի օլմասընտը Միսափիրի-
քի քէլիմէ իլէ կէօսթէրմէք իս-
թէմիլ իտի : Ֆարգաթ Մ. Սաքիա
—Մուհի պու նօգթայը անլամագ
իսթէմէյուպ, հոգաբարձուարը վը-
գայէ իթմէք նիլէթի իլէ՝ Պուք-
ընէ միլլէթտալարըմըլըն մուճի-
պի թէքսիւֆ հալլէրինտէն տօլա-
յը եալընը քահանայ վէ վարժա-
պետի մէսուլ թուլթմագ իսթէր ի-
տի : Պիլ իսէ ատալէթի խաթը-
րա պօղմագ ասլա իսթէմէտիկի-
միլ սէպէպլէ քահանայը վէ վար-
ժապետի մէսուլիլէթտէն խալի
թուլթմամագլէ պէրապէր , մէսու-
լիլէթիլէն էն աղըրը տօղրուտան
տօղրու հոգաբարձուարա ալիտ
օլտըլըն կէօսթէրմէք իսթէմիլ
իտիք :

Հոգաբարձու էֆէնտիլէր թիւր-
քիալը հէր պիր էրմէնիէ՝ պիլա
իսթիսնա , թիւրք նաղարը իլէ
պտգմագ իսթէր իքէն , կաղէթա-
լարա եօլտըգլարը մէքըրը քիւ-
ֆիւր չըգըսը օլան իմպազը մէք-
թուպլէրի իլէ , հաղըգաթէն պիւ-
թիւն պիւթիւնէ թիւրք գաֆասը
թաշըր օլտըգլարըն կէօսթէրմիլ-
լէր տիր : Մալիւմ օլտըլը իւղը՝
մէօհիւրիւ օլան պիր մէքթուպտէ
թիւրք իմպա գօյմագ :

Մէքըրը հոգաբարձուարըն նէ
տէրէճէ միլլէթէրվէր օլտըգլա-
րընը իքի սաթըրլէ իզահ իտէլիմ :

Էրմէնի վարժապետլէրին կիւն-
տէ 1 1/2 սաաթտան զիյատէ մէք-
թէպտէ գալմալարընը մէնն իթ-
միլլէր տիր :

Բուլմէն եօրթուլարընտա մէք-
թէպ գաբալը վէ միլլէթ ու քի-
լիսէ եօրթուլարըմըգտա աչըգ օ-
լաճագ տըր :

Բաբալար Բուլմէն բաբալարը-
նա մախսուս օլան գալբագ վէ էլ-
պիսէյի թաշըլաճագլար տըր :

Մէքթէպտէ հէր պիր տէրս
Բուլմէն լիսանը իլէ վէրիլէճէք վէ
սաիրէ վէ սաիրէ :

Իշպուլ թէնպիլէրէ մուլսալիֆ
պուլընան վտրժապետ վէ բաբաս
սաաթընտա մէմուրիլէթտէն թարտ
օլընուր :

Բուլմանիա հիւքիւմէթի մէզհէպ
վէ մէքթէպլէրի տէրէճէի ֆէվգէ-
լատէտէ սէրպէսթ պըրագմըլ ի-
քէն , Պուգըն հոգաբարձուարը
պու. եօլ իլէ միլլէթ ու մէզհէպի
իսթէնճէ վէ թէգլիգաթ ալթընա
ալմըլար տը :

Իշլթէ հալ պու մէրքէպտէ իքէն՝
պու հոգաբարձուարա «շարգալը
էֆէնտիլէր» տէմէքտէն մաստա՝
նէ՝ իսիմ վէ նէ՝ սըֆաթ վէրիւ-
մէք լաղըմ տըր :

Միսափիր

ՏԱԽԼԻՅԷ

— — —

Պուլկար Էրպապը գալէմ շիր-
քէթիլին 30 ընճը սէնէի տէվրի-
յէսի մինասիպէթի իլէ Սօֆիտա
պիր զիյնէթ իճրա օլունմուշ տըր :

—Պունտան էվլէլ կէլէն հալա-
տիլէրին խիլաֆընտա օլարագ ,
պու սէնէ ֆազանլըգտա կիւլ մահ-
սուլընը կէլէն սէնէյէ գըլասէն
25 0/0 էքսիկ օլտուղը թաստիգ
օլմուշ տըր : Պունըն սէպէպի իլք
պէհարըն սօուգ վէ նէմ օլմասը
տըր : Ամէրիգա իլէ Սպանիա պէյ-
նիստէ եհնիտէն սուլհ իպգա օ-
լունը իսէ , ֆիյաթլարըն իւքսէլէ-
ճէկի մէմուլ օլունըյօր :

—1892 սէնէսի պուլկար իս-
թիգրաղը թահվիլլէրի վիլէնիս
պօրսասընտա 108 ֆուսնքտան
110.20յէ իւքսէլիլլէր տիր :

—Մէարիֆ նէգարէթիլին պիր
գարարը միւճէպիլնէ՝ հէր պուլ-
կար մէքթէպլէրինտէ մէհուր խալը
խահ միւթէվէֆա լիլլօղիւ կէօր-
կիէֆիլն թասվիրի պուլընաճագ
տըր :

—Պէլկրատաքի Պուլկարիս
մասլահաթիկիւլարըլը քիւթիպի
կ. Սըրիտօնօֆ շէհըր մէքըրտէ
վէֆաթ իթմիլ տիր :

—Մակէթնիստան կէլէն գա-
լիլէ կէօմրիկի յուլիս իպթիտա-
սընա գատար լաղվ օլունտըլըն
տան , ֆէօսթէնտիլտէն վէ Տուպի-
ցատան ֆէվգէլատէ գալիլէ իտ.
խալ օլունմըլ վէ քիւլ ֆիյաթը
30 սթօթիլլէրտէ 20 սթօթիլլէր-
յէ տիւշմիլ տիր :

—Աստրիա թապալարընտան
մատմուլէլ վիւրնիկ Պուքաշ աչգ
ու ալէագա սէպէպիլլէ Ռուսճուգ-
տա Օթէլ Սանթրալտա ընվօլլէր
իլէ նէֆսիլն սուի գատա իթմիլ
տիր :

—Մէհուր պուլկար վէթան-
ընէր Սթէֆան Պէրոն մայիս
25տէ Իպրայիլտէ վէֆաթ իթմիլ-
տիր :

Միւթէվէֆայի մուլմիլէյհ էօ-
թէտէն պէրու միլլէթ իլլէրինէ
վէ պա խուսուս պուլկար մէքթէպ
լէրինէ ֆէվգէլատէ իանէլէր իթ-
միլ վէ 1877-78 մուհարէպէսին-
տէն էվլէլ վէթանըն խէլասընա
չալըլան պուլկար քօմիթէլէրի ա-
ղալարընա տաիմա մատտի վէ մա-
նէվի մուլմիլէթտէ պուլունմուշ
տըր :

Մ ՈՒ ՀԱՐԷՊԷ

— — —

Հէր նէ գատար Սպանիա վիւքէ-
լա ընյիսի մէպուսան մէճիլիստէ
Սպանիանըն մուհարէպէյէ խի-
թամ վէրիլմէսի իլլէն պէօյիւք
տէվլէթլէրէ մուրաճաաթ իթմէ-
միլ վէ տահա իքի սէնէ մուհա-

րէպէ իթմէք իլլէն քիւֆի գուվ-
վէթէ մալիք օլտուղըն պէյան
իթմիլ իսէտէ , պու կիպի լաֆ-
լարըն եալընըլ էհալիլին հէյէճա-
նըն թէսքին իթմէք մագսէտի
իլէ վիւքէլա վէ սալիլ մէմուլար
թարաֆընտան սէօյլէնմէքտէ օլ-
տուղընա հէր քէս գանի օլմուշ
տըր : Ֆիլհագըղա շիմտիտէն շու-
մուհարէպէտէ Սպանիա քիւլլէն
ղալպ իթմիլ ատտ օլլէնապիլիլ :
Ամէրիգալլար թարաֆընտան պիր
մահպուսը պիր տէլիլէ թըգար
կիպի Սանթրալիս քէօրֆէլիլտէ
գաբատըլմըլ օլան ամիրալ Սէր-
վարօնըն հալընըլ պիր ումիտի
գալմըլ ըտը , եանի , Գաաիքստէ
պուլընան հարպ սէֆիլէլլէրին ա-
միրալ Գամարա գօմանտաթ թահ-
թընտա Սպանիտան հարտմա
եհթիլմէսի . հալպուր ի մէրգուլ
ամիրալ խալը վաղըթտան պէրի
Գատիքստէն հօլա չըգամայօր վէ
պունըն սէպէպի իսէ , սօն հալա-
տիլէրէ նաղարէն՝ սէֆիլէլլէրին
տէնիլլէ վէ գալիլայա տալանաճագ
հալտէ պուլընմալըպ , թամիր ու
խալահաթա ըէք միւհիլմաճ օլտուգ-
լարը իմիլ :

Ֆիլիլլին ատալարընտա իսէ ,
եհըլի ասըլարա գարըլ տուրմագ
իլլէն Սպանիալլարըն գուվվէթի
եօգ տըր : Ասըլար տաիլա եհնի
մահէլլէր վէ մէվգըլար գալթ իթ-
մէքտէ օլուպ , հիլ պիր թարաֆ-
տան Սպանիա ասքէրինէ եհնի
եարտըմ եհթիլլէնէլլէն ումիտ
եօգ տըր : Պիր թէլէկրաֆա նաղա-
րէն՝ ասըլար հէօքիլմէթ մէրքէլի
օլան Մանիլալը տաիլ գալթ իթ-
միլլէր տիր : Պու հալապիսին շիմ-
տիքի հալ էսասըլ օլտուղը միմ-
քին իսէտէ , Մանիլանընտա պու
կիտիլլէն աղ կիւնտէն ասըլարըն
եալտա Ամէրիգալլարըն էլլէնէ
տիւշէնէլլէն տէ շիւպհէ գալմամըլ
տըր :

Կուլաթանամօտա տաիլ ամէ-
րիգա ասքէրի գարալա չըգմըլ վէ
Սպանիալլարըն պիր հիւճուսու-
նէ մուգալմէթլէ անլէրի կէրի
սիւրմիլ տըր :

Եալընըլ Միստանօտա (Ֆիլի-
լին ատալարը) Սպանիալլարըն
ասըլարա գարըլ պիր ուֆագ մու-
վաֆագըլաթը օլմուշ տըր , շէօյ-
լէքի, պիր գալիլատա ասըլար մաղ-
լուպ վէ 36 քիլի թէլէֆաթ իլլէ
կէրի շէքիլմէկէ մէճպուր օլմուշ-
լար տըր :

Սպանիա սէֆիլէլլէրի իլլէն 3000
թօնօ քէօմիլ կէօթիլլարմէքտէ օ-
լան պիր ինկիլիլ վաթօը հօլտա
Ս. Լուի նամ Ամէրիգա սէֆիլէսի
թարաֆընտան թուլթուլմըլ տըր :

Ա. Զ. Գ.

Իրաւունք կը ծախուի Սասուն
սըճարանի ծխալաճառ Պ. Վահան
Անտօնեանի, Մուսալլա գուրու գահ-
վէճի Պ. Յակոբ կէօղիւպէօյիւք-
եանի և Ապիւրրահման ձկնիթի
դէմ Հայկական Գրատան մէջ
ի վաճառ :

ԶԱՍԻՐԻ ԲԻԱՑԱՍԸ

Վաւսնա 9 Զուրիս

Պոռոտայ
Վալիօն , լիպրա 47-51 , հէքթօլ.
9.50-10 ֆրանք
Արապա , լիպրա 47-55 հէքթօլ.
8.50-10 ֆրանք

Արքա
Լիպրա 38-40 , հէքթօլ. 4.80-5.20
ֆրանք

Մըսրը
Վալիօն եօգլիպրա 57-58 հէք.
7-7.50 ֆրանք
Արապա , լիպրա 57-60 հէքթօլ.
7.80-8 ֆրանք

Ֆաստիկա
100 օգգասը 15-20 ֆրանք՝ մալա
կէօրէ

Արապա մուլմէլէսի՝ Նարօլէոն
24 ֆու. հիսապը իլլէ տիր .

Կիւնտէ 2—3 արապա պուլ-
տայ, 3—4 արապա արքա կէլմէք-
տէ տիր :

«ԱՐԵԻԵԼԵՍՆ ԶԱՇՄԱՐԱՆ»

Նար քաղաք
Թ Ո Ւ Ս Ճ Ո Ւ Ք

Սիմիօնֆի գրամատան դէմ
գտնուող նախկին «Մասիս» շէն-
քին մէջ , ուր կը պատրաստուին
տան խահանոցի յատուկ մաքրու-
թեամբ համագամ կերակուրներ
և անուշեղէններ չափաւոր գինե-
րով , փորձելը սուղեղ է :
Բաժանորդագրութիւն կ'ընդուն-
ուի դիւրամատչելի պայմաններով :

Տէկիլմէն թաշը տիլլէմէք ի-
լլէն մախսուս սէնաաթ էհիլի ա-
րալանլար աթիտէքի ատրէսէ միւ-
րաճաաթ իթմէլ տիրլէր :

Թոքոսեան վասթասըլլա
Թոլմաս Մըգրաքճեան, Պուրթէշ
Գալէա—Բահօվա , 124 .

Ա. Զ. Գ.

Իրաւունք կը ծախուի Ռուս-
ճուգ , բօտայի նախկին շէնքի
դիմաց , Տիար Մ. Թիւթիւնեա-
նի խանութը :

Լոյս տեսաւ

ԲԱՅՅԻԻ

ՍԱՄՈՒԷԼ

Պատմական վէպը

Ա. Բ. Գ. Գիրք

Հեղինակին վերջին պատկերով

Գինն է 7 շիլինգ

Իսկ «Գաւիթ-Բէկ» հատոր Ա.
Բ. եւ Գ. վերջաբանով և «Կայ-
ճեր» հատոր Բ. յիւլիստաւր, լոյս
պիտի տեսնեն ներկայ տարուայ
ընթացքում , որոնց բաժանորդա-
գրութիւնը շարունակուում է , եր-
կու գրքի միասին բաժանորդա-
գինն է՝ 10 շիլինգ . իսկ լոյս տես-
նելուց յետոյ կարծեման 1/4 շիլինգ :
Ցանկացողները թէ՛ Սամուէլի
և թէ՛ Բալֆօրի միւս երկերի հա-
մար , կարող են դիմել այս հասցէին

Mme Raffi
270, Uxbridge Road.
Shepherd's Bush,
London W.

Ա. Զ. Գ.

Ով որ գիտէ Թորոս Աղապ-
լարեան անուն 25 տարեկան , քնիկ
երզնկացի երիտասարդին ուր գըտ-
նուիլը , թող հաճի իմացնել իրա-
ւունքի խմբագրութեան :